

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում:

►B Թիվ 3051/95 կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2006 թվականի փետրվարի 15-ի թիվ 336/2006 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ)

Համայնքում անվտանգության կառավարման միջազգային կանոնակարգի իրականացման մասին

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

(ՊՏ L 064, 04.03.2006թ., էջ 1)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

		թիվ	էջ	ամսաթիվ
►M1	Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 16-ի L 157 թիվ 540/2008 կանոնակարգով (ԵՀ)		15	17.06.2008թ.
►M2	Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2008 L 311 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1137/2008 (ԵՀ) կանոնակարգով		1	21.11.2008 թ.

▼B

Թիվ 3051/95 կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2006 թվականի փետրվարի 15-ի թիվ 336/2006 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ)

Համայնքում անվտանգության կառավարման միջազգային կանոնակարգի իրականացման մասին

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 80(2) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը (1),

Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համապատասխան(2),

Քանի որ.

- 1) «Նավերն անվտանգ շահագործելու եւ աղտոտումը կանխարգելելու մասին» կառավարման միջազգային կանոնագիրքը, այսուհետ՝ «ԱԿՄ կանոնագիրք» ընդունվել է Միջազգային ծովային կազմակերպության կողմից 1993 թվականին: Սույն կանոնագիրքը աստիճանաբար պարտադիր դարձավ միջազգային նավարկություն իրականացնող նավերի մեծամասնության համար, 1974 թվականի «Ծովում կյանքի անվտանգության մասին» միջազգային կոնվենցիայի (SOLAS) «Նավերի անվտանգ շահագործումը կառավարելու մասին» IX գլխի ընդունմամբ՝ 1994 թվականի մայիսին,
- 2) ԱԿՄ կանոնագիրքը փոփոխվել է ԾՄԿ-ի միջոցով MSC.104(73) որոշմամբ, որն ընդունվել է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին,
- 3) Վարչական մարմինների կողմից ԱԿՄ կանոնագրքի իրականացման մասին ուղեցույցներն ընդունվել են ԾՄԿ A.788(19) որոշմամբ՝ 1995 թվականի նոյեմբերի 23-ին: Այս ուղեցույցները փոփոխվել են A.913(22) որոշմամբ, որն ընդունվել է 2001 թվականի նոյեմբերի 29-ին,
- 4) Խորհրդի 1995 թվականի դեկտեմբերի 8-ի «Քարշակային ուղեւորատար լաստանավերի մասին» ('*ro-ro*' լաստանավերի) թիվ 3051/95 կանոնակարգը (3) ԱԿՄ կանոնակարգը պարտադիր դարձրին Համայնքի մակարդակում՝ սկսած 1996 թվականի հուլիսի 1-ից

բոլոր 'ro-ro' լաստանավերի համար, որոնք կանոնավոր փոխադրումներ են իրականացնում դեպի անդամ պետությունների նավահանգիստներ եւ այդ նավահանգիստներից, ինչպես ազգային, այնպես էլ միջազգային նավարկությունների դեպքում՝ անկախ դրանց դրոշից: Սա առաջին քայլն էր բոլոր անդամ պետություններում ԱԿՄ կանոնագրքի միասնական եւ համաձայնեցված կատարումն ապահովելու համար,

- 5) համաձայն SOLAS IX գլխի դրույթների՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ԱԿՄ կանոնագիրքը պարտադիր դարձավ այն կազմակերպությունների համար, որոնք միջազգային նավարկություններ իրականացնելիս շահագործում են ուղեւորատար նավեր՝ ներառյալ արագընթաց ուղեւորատար նավերը, նավթատար նավերը, քիմիական նյութեր տեղափոխող նավերը, գազ տեղափոխող նավերը, խուռնաբեռն փոխադրումներ իրականացնող նավերը եւ արագընթաց բեռնատար նավերը՝ 500 տոննաժ եւ ավելի բեռնունակությամբ,
- 6) 2002 թվականի հուլիսի 1-ին ԱԿՄ կանոնագիրքը պարտադիր դարձավ այն կազմակերպությունների համար, որոնք միջազգային նավարկություններն իրականացնելիս շահագործում են այլ բեռնատար նավեր եւ շարժական ծովային հորատող սարքեր՝ 500 տոննաժ եւ ավելի բեռնունակությամբ,
- 7) քանի որ ծովում մարդկային կյանքի անվտանգությունը եւ շրջակա միջավայրի պաշտպանությունը կարող է արդյունավետորեն բարելավվել՝ ԱԿՄ կանոնագիրքը խստորեն եւ պարտադիր հիմունքներով կիրառելու միջոցով,
- 8) ցանկալի է ԱԿՄ կանոնագիրքն ուղղակիորեն կիրառել անդամ պետության դրոշի ներքո նավարկող նավերի նկատմամբ, ինչպես նաեւ այն նավերի նկատմամբ, որոնք, անկախ դրանց դրոշից, ներգրավված են ներքին նավարկություններում կամ կանոնավոր ծովային փոխադրումներում, որոնք իրականացվում են դեպի անդամ պետությունների նավահանգիստներ կամ այդ նավահանգիստներից,

- 9) նոր կանոնակարգի ընդունումն ուղղակի կիրառությամբ պետք է ապահովի ԱԿՄ կանոնագրքի կիրարկումն այն համոզմամբ, որ անդամ պետությունները պետք է որոշեն, արդյոք կիրառեն կանոնագիրքը նավերի համար, անկախ դրոշից, որոնք շահագործվում են նավահանգստային վայրերում,
- 10) հետեւաբար, ուժը կորցրած պետք է ճանաչվի թիվ 3051/95 կանոնակարգը (ԵՀ),
- 11) եթե անդամ պետությունը կարծում է, որ գործնականում բարդ է ընկերությունների համար հետեւել ԻՍԿ կանոնագրքի Ա մասի հատուկ դրույթներին որոշ նավերի կամ նավերի կատեգորիաների դեպքում, որոնք բացառապես ներգրավված են անդամ պետության ազգային նավարկություններում, այն կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն շեղվել այդ դրույթներից՝ կիրառելով միջոցներ՝ ապահովելով կանոնագրքի նպատակների համարժեք իրագործումը: Այն կարող է նման նավերի եւ ընկերությունների դեպքում սահմանել այլընտրանքային հաստատագրման եւ ճշգրտման ընթացակարգեր,
- 12) անհրաժեշտ է հաշվի առնել Խորհրդի 1995 թվականի հունիսի 19-ի 95/21/ԵՀ հրահանգը՝ պետության նավահանգստի կողմից նավարկությունների նկատմամբ իրականացվող վերահսկողության մասին (4),
- 13) անհրաժեշտ է նաեւ հաշվի առնել «Նավերի ստուգում եւ հետազոտում իրականացնող կազմակերպությունների ու ծովային գործունեության հարցերով վարչական մարմինների համապատասխան գործողությունների համար ընդհանուր կանոնների եւ չափորոշիչների մասին» Խորհրդի 1994 թվականի նոյեմբերի 22-ի 94/57/ԵՀ հրահանգը (5)՝ ճանաչված կազմակերպությունները սույն Կանոնակարգի նպատակով սահմանելու համար, ինչպես նաեւ «Ուղեւորատար նավերի անվտանգության կանոնների եւ չափորոշիչների մասին» Խորհրդի 1998 թվականի մարտի 17-ի 98/18/ԵՀ հրահանգը (6)՝ ազգային նավարկություններում ընդգրկված ուղեւորատար նավերի նկատմամբ

սույն Կանոնակարգի կիրառության շրջանակը հաստատելու նպատակով,

- 14) Ու հավելվածը փոփոխելու համար անհրաժեշտ միջոցները պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգերը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը (7) համապատասխան,
- 15) քանի որ սույն Կանոնակարգի նպատակը, այն է՝ կատարելագործել նավերի անվտանգության կառավարումը եւ նավերի անվտանգ շահագործումը, ինչպես նաեւ նավերից աղտոտման կանխումը, չի կարող բավարար չափով իրականացվել անդամ պետությունների կողմից եւ, հետեւաբար, կարող է ավելի լավ իրականացվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ ընդունել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածում նշված համաչափության սկզբունքի համաձայն՝ սույն Կանոնակարգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է՝ նշված նպատակներն իրագործելու համար,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Նպատակը

Սույն Կանոնակարգի նպատակն անվտանգության կառավարումը եւ նավերի անվտանգ շահագործումն կատարելագործելն է, ինչպես նաեւ նավերից աղտոտումը կանխելը, ինչպես նշված է 3(1) հոդվածում՝ ապահովելով, որ այդ նավերը շահագործող կազմակերպությունները համապատասխանեն ԱԿՄ կանոնագրքի պահանջներին հետեւյալ միջոցներով՝

ա) ընկերությունների կողմից նավերի վրա եւ առափնյա շրջաններում անվտանգության կառավարման համակարգերի ստեղծման եւ պատշաճ մակարդակով պահպանման միջոցով եւ

բ) դրոշի պետության եւ տվյալ նավահանգստի պետության վարչական մարմինների կողմից հսկողության միջոցով:

Հոդված 2

Սահմանումներ

Սույն Կանոնակարգի իմաստով կիրառվում են հետևյալ սահմանումները.

1) «ԱԿՄ կանոնագիրք» նշանակում է «Նավերն անվտանգ շահագործելու եւ աղտոտումը կանխարգելելու մասին» կառավարման միջազգային կանոնագիրք, որն ընդունվել է Ծովագնացության միջազգային կազմակերպության կողմից (ԾՄԿ) Ասամբլեայի 1993 թվականի նոյեմբերի 4-ի A. 741 (18) բանաձեւի միջոցով, որը փոփոխվել է ԾՄԿ-ի 2000 թվականի դեկտեմբերի 5-ի MSC.104 (73) բանաձեւի միջոցով եւ կցված է սույն Կանոնակարգի I հավելվածին՝ դրա թարմացված տարբերակով,

2) «ճանաչված կազմակերպություն» նշանակում է մի մարմին, որը ճանաչվել է 94/57/ԵՀ հրահանգի համաձայն,

3) «ընկերություն» նշանակում է նավի սեփականատեր կամ ցանկացած այլ կազմակերպություն կամ անձ, ինչպես օրինակ՝ տնօրենը կամ այն անձը, ով վարձում է նավն առանց անձնակազմի, ով ստանձնել է նավը շահագործելու պատասխանատվություն, եւ ով այդ պատասխանատվությունն ստանձնելիս համաձայնել է կատարել ԱԿՄ կանոնագրքով նախատեսված բոլոր պարտականությունները եւ կրել ամբողջ պատասխանատվությունը,

4) «ուղեորատար նավ» նշանակում է նավ, այդ թվում՝ արագընթաց նավ, որը տեղափոխում է ավելի քան 12 ուղեւոր, կամ ուղեւորատար ջրասույզ նավ,

5) «ուղեւոր» նշանակում է ցանկացած անձ, բացի

ա) նավապետից եւ անձնակազմի անդամներից կամ այլ անձանցից, որոնք աշխատում են կամ ընդգրկված են նավի վրա ցանկացած պաշտոնում, նավի հետ կապված աշխատանքներում, եւ

բ) մեկ տարեկան չդարձած երեխայից,

6) «արագընթաց նավ» նշանակում է արագընթաց նավ, ինչպես սահմանված է SOLAS-ի X-1/2 Կանոնակարգով՝ դրա թարմացված տարբերակով: Արագընթաց ուղեւորատար նավի դեպքում կիրառվում են 98/18/ԵՀ հրահանգի 2(գ) հոդվածում նշված սահմանափակումները,

7) «բեռնատար նավ» նշանակում է նավ, այդ թվում՝ արագընթաց նավ, որն ուղեւորատար նավ չէ,

8) «միջազգային նավարկություն» նշանակում է նավարկություն անդամ պետության նավահանգստից կամ որեւէ այլ պետությունից դեպի այդ պետությունից դուրս գտնվող նավահանգիստ կամ ընդհակառակը,

9) «ներքին նավարկություն» նշանակում է ծովային տարածքներում նավարկություն անդամ պետության նավահանգստից դեպի միեւնոյն կամ այլ նավահանգիստ այդ անդամ պետության տարածքում,

10) «կանոնավոր ծովային փոխադրումներ» նշանակում է նավով իրականացվող մի շարք փոխադրումներ՝ միեւնոյն երկու կամ ավելի կետերի միջեւ երթեւեկությունը սպասարկելու համար՝

ա) ըստ հրապարակված ժամանակացույցի, կամ

բ) կանոնավոր կամ հաճախակի այնպիսի փոխադրումներով, որ դրանք համարվեն ճանաչված ու պարբերական փոխադրումներ,

11) «*ro-ro* ուղեւորատար լաստանավ» նշանակում է ծովային ուղեւորատար նավ, ինչպես սահմանված է SOLAS-ի II-1 գլխով՝ դրա թարմացված տարբերակով,

12) «ուղեւորատար սուզանավ» նշանակում է ուղեւորափոխադրող շարժական նավ, որը հիմնականում աշխատում է ջրի տակ եւ աջակցություն է ստանում ջրի մակերեւոյթից, ինչպես, օրինակ՝ վերջրյա նավից կամ առափնյա կայաններից՝ դիտանցում իրականացնելու կամ ստորեւ նշված մեկ կամ մի քանի նպատակների համար.

ա) սնուցման աղբյուրի վերալիցքավորում,

բ) բարձր ճնշմամբ օդով վերալիցքավորում,

գ) կենսապահովման միջոցների համալրում,

13) «շարժական ծովային հորատող սարք» նշանակում է նավ, որը կարող է ներգրավված լինել հորատման աշխատանքներում՝ ծովի հատակում պաշարներ, ինչպես, օրինակ՝ հեղուկ կամ գազային ածխաջրածիններ, ծծումբ կամ աղ հետախուզելու կամ շահագործելու համար,

14) «համախառն տոննաժ» նշանակում է նավի համախառն տարողությունը տոննաներով, որը սահմանվում է «Նավերի տոննաժի չափման մասին» 1969 թվականի միջազգային

կոնվենցիայի համաձայն կամ այն նավերի դեպքում, որոնք ընդգրկված են բացառապես ներքին նավարկություններում եւ չեն չափվում նշված Կոնվենցիային համապատասխան, ինչպես նաեւ նավի համախառն տոննաժը՝ տոննաժի չափման ազգային կանոնակարգերին համապատասխան:

Հոդված 3

Գործողության շրջանակը

1. Սույն Կանոնակարգը կիրառվում է հետեւյալ տեսակի նավերի եւ դրանք շահագործող ընկերությունների նկատմամբ՝

ա) անդամ պետության դրոշի ներքո նավարկող բեռնատար եւ ուղեւորատար նավեր, որոնք իրականացնում են միջազգային նավարկություններ,

բ) բեռնատար եւ ուղեւորատար նավեր, որոնք բացառապես իրականացնում են ներքին նավարկություններ՝ անկախ դրանց դրոշից,

գ) բեռնատար եւ ուղեւորատար նավեր, որոնք դեպի անդամ պետությունների նավահանգիստներ եւ այդ նավահանգիստներից իրականացնում են կանոնավոր ծովային փոխադրումներ՝ անկախ դրոշից,

դ) շարժական ծովային հորատող սարքեր, որոնք գործում են անդամ պետության իրավասության ներքո:

2. Սույն Կանոնակարգը չի կիրառվում հետեւյալ տեսակների նավերի կամ դրանք շահագործող ընկերությունների նկատմամբ՝

ա) ռազմական նավեր եւ զորքեր տեղափոխող նավեր ու այլ նավեր, որոնք պատկանում են որեւէ անդամ պետության կամ շահագործվում են դրա կողմից եւ օգտագործվում են միայն պետության ոչ առեւտրային ծառայության նպատակով,

բ) այն նավերը, որոնք շարժման մեջ չեն դրվում մեխանիկական միջոցներով՝ պարզունակ կառուցվածքով փայտե նավեր սպորտանավեր ու զբոսանավեր, եթե դրանք համալրված չեն կամ չեն համալրվի անձնակազմով եւ չեն տեղափոխում կամ չեն տեղափոխի 12-ից ավելի ուղեւոր՝ առեւտրային նպատակներով,

գ) ձկնորսական նավեր,

դ) համախառն 500 տոննաժ ցածր բեռնունակություն ունեցող բեռնատար նավեր եւ շարժական ծովային հորատող սարքեր,

ե) ուղեւորատար նավեր, ‘ro-ro’ ուղեւորատար լաստանավեր, Գ եւ Դ դասի ծովային տարածքներում, ինչպես սահմանված է 98/18/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածով:

Հոդված 4

Կանոնակարգի դրույթների պահպանումը

Անդամ պետություններն ապահովում են, որ նավեր շահագործող բոլոր ընկերությունները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կանոնակարգը, պահպանեն սույն Կանոնակարգի դրույթները:

Հոդված 5

Անվտանգության կառավարման պահանջները

3(1) հոդվածում նշված նավերը եւ դրանք շահագործող ընկերությունները բավարարում են ԱԿՄ կանոնագրքի Ա մասի պահանջները:

Հոդված 6

Հավաստագրումը եւ ճշգրտումը

Հավաստագրման եւ ճշգրտման նպատակներից ելնելով՝ անդամ պետությունները պահպանում են ԱԿՄ կանոնագրքի Բ մասի դրույթները:

Հոդված 7

Շեղումները

1. Եթե անդամ պետությունը կարծում է, որ տվյալ անդամ պետությունում բացառապես ներքին նավարկություններ իրականացնող որոշ նավերի կամ նավերի կատեգորիաների դեպքում ընկերությունների համար գործնականում բարդ է բավարարել ԱԿՄ կանոնագրքի Ա մասի 6-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ եւ 12-րդ պարբերությունների պահանջները, ապա այն

կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն շեղվել այդ դրույթներից՝ կիրառելով միջոցներ՝ ապահովելով Կանոնագրքի նպատակների համարժեք իրագործումը:

2. Անդամ պետությունը կարող է սահմանել հավաստագրման եւ ճշգրտման այլընտրանքային ընթացակարգեր այն նավերի եւ ընկերությունների դեպքում, որոնց նկատմամբ 1-ին պարբերության լույսի ներքո շեղում է կատարվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործնականում բարդ է կիրառել 6-րդ հոդվածով սահմանված պահանջները:

3. 1-ին պարբերությամբ եւ, եթե կիրառելի է, 2-րդ պարբերությամբ սահմանված հանգամանքների դեպքում կիրառվում է հետեւյալ ընթացակարգը՝

ա) տվյալ անդամ պետությունը ծանուցում է Հանձնաժողովին շեղման եւ այն ակտերի մասին, որոնք այն պատրաստվում է ընդունել,

բ) եթե ծանուցումից հետո 6 ամսվա ընթացքում 12(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն որոշվում է, որ առաջարկվող շեղումը հիմնավորված չէ կամ առաջարկվող միջոցները բավարար չեն, ապա անդամ պետությունը պետք է փոփոխի կամ զերծ մնա առաջարկվող ակտերն ընդունելուց,

գ) անդամ պետությունը հրապարակում է ընդունված ակտերը՝ ուղղակիորեն հղում կատարելով 1-ին պարբերությանը եւ, եթե կիրառելի է, 2-րդ պարբերությանը:

4. 1-ին պարբերության եւ, եթե կիրառելի է, 2-րդ պարբերության համաձայն շեղում կատարելուց հետո տվյալ անդամ պետությունը հավաստագիր է տրամադրում II հավելվածի Բ մասի 5-րդ հոդվածի երկրորդ ենթապարբերության համաձայն՝ նշելով կիրառելի աշխատանքային սահմանափակումները:

Հոդված 8

Հավաստագրերի վավերականությունը, ընդունումը եւ ճանաչումը

1. Համապատասխանության փաստաթուղթը վավերական է դրա տրամադրումից հետո մինչեւ հինգ տարի: Անվտանգության կառավարման հավաստագիրը վավերական է դրա տրամադրումից հետո մինչեւ հինգ տարի:

2. Համապատասխանության փաստաթղթի եւ Անվտանգության կառավարման հավաստագրի ժամկետը երկարաձգելու դեպքում կիրառվում են ԱԿՄ կանոնագրքի Բ մասի համապատասխան դրույթները:

3. Անդամ պետություններն ընդունում են համապատասխանության փաստաթղթեր, համապատասխանության միջանկյալ փաստաթղթեր, անվտանգության կառավարման հավաստագրեր եւ անվտանգության կառավարման միջանկյալ հավաստագրեր, որոնք տրամադրվում են ցանկացած այլ անդամ պետության վերահսկող մարմնի կողմից կամ այդ վերահսկող մարմնի անունից ճանաչված կազմակերպության կողմից:

4. Անդամ պետություններն ընդունում են համապատասխանության փաստաթղթեր, համապատասխանության միջանկյալ փաստաթղթեր, անվտանգության կառավարման հավաստագրեր եւ անվտանգության կառավարման միջանկյալ հավաստագրեր, որոնք տրամադրվում են երրորդ երկրների վարչական մարմինների անունից եւ դրանց կողմից:

Կանոնավոր ծովային փոխադրումներ իրականացնող նավերի դեպքում, այնուամենայնիվ, երրորդ երկրների վարչական մարմինների կողմից տրամադրված համապատասխանության փաստաթղթերի, համապատասխանության միջանկյալ փաստաթղթերի, անվտանգության կառավարման հավաստագրերի եւ անվտանգության կառավարման միջանկյալ հավաստագրերի՝ ԱԿՄ կանոնագրքի հետ համապատասխանությունը ցանկացած համապատասխան միջոցով ճշգրտվում է տվյալ անդամ պետության կողմից կամ նրա անունից, եթե դրանք չեն տրամադրվել անդամ պետության վարչական մարմինների կամ ճանաչված կազմակերպության կողմից:

Հոդված 9

Պատժամիջոցները

Անդամ պետությունները սահմանում են սույն Կանոնակարգի խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ կանոնները եւ իրականացնում են բոլոր անհրաժեշտ քայլերը՝ դրանց կիրառությունն ապահովելու համար: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ:

Հոդված 10

Ձեկույց ներկայացնելը

1. Անդամ պետությունները յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ սույն Կանոնակարգի կատարման մասին զեկույց են ներկայացնում Հանձնաժողովին:
2. Հանձնաժողովը, 12(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն, նման զեկույցների համար սահմանում է ներդաշնակեցված ձեւեր:
3. Հանձնաժողովը Եվրոպական ծովային անվտանգության գործակալության աջակցությամբ եւ անդամ պետություններից զեկույցներն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում պատրաստում է համապարփակ զեկույց սույն Կանոնակարգի կիրառման մասին, անհրաժեշտության դեպքում՝ առաջարկված ցանկացած միջոցառումների հետ մեկտեղ: Սույն զեկույցը փոխանցվում է Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին:

Հոդված 11

Փոփոխություններ

1. ԱԿՄ կանոնագրքում կատարված փոփոխությունները կարող են բացառվել սույն Կանոնակարգի գործողության շրջանակից՝ Անվտանգ ծովերի եւ նավերից առաջացող աղտոտումը կանխարգելող կոմիտե ստեղծող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 2099/2002 կանոնակարգի (ԵՀ) (ԱԾԿ) (8) 5-րդ հոդվածին համապատասխան:

▼M2

2. II հավելվածին համապատասխանեցումները, որոնք նախատեսված են սույն Կանոնակարգի ոչ կարեւոր տարրերը փոփոխելու համար, ընդունվում են 12(3) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 12

Կոմիտեի աշխատակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է Անվտանգ ծովերի եւ նավերից առաջացող աղտոտումը կանխարգելող կոմիտեն (ԱԾԿ), որը հիմնադրվել է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2099/2002 կանոնակարգի (ԵՀ) 3-րդ հոդվածով:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երկու ամիս:

3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով այդ որոշման 8-րդ հոդվածի դրույթները:

▼B

Հոդված 13

Ուժը կորցրած ճանաչելը

Թիվ 3051/95 կանոնակարգը (ԵՀ) ուժը կորցրած է ճանաչվում 2006 թվականի մարտի 24-ից:

2. Համապատասխանության միջանկյալ փաստաթղթերը, անվտանգության կառավարման միջանկյալ հավաստագրերը, համապատասխանության փաստաթղթերը եւ անվտանգության կառավարման հավաստագրերը, որոնք տրամադրվում են մինչեւ 2006 թվականի մարտի 24-ը, ուժի մեջ են մնում մինչեւ դրանց ժամկետը լրանալը կամ մինչեւ դրանց հաջորդ հաստատումը:

Հոդված 14

Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Ինչ վերաբերում է բեռնատար եւ ուղեւորատար նավերին, որոնց դեպքում արդեն չի պահանջվում ԱԿՄ կանոնագրքի պահանջներին համապատասխանություն, ապա սույն Կանոնակարգը կիրառվում է 2008 թվականի մարտի 24-ից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ անմիջականորեն գործում է բոլոր անդամ պետություններում:

ՀԱՎԵԼՎԱԾ I

Նավերի անվտանգ շահագործման եւ աղտոտման կանխարգելման մասին կառավարման միջազգային կանոնագիրք (Անվտանգության կառավարման միջազգային (ԱԿՄ) կանոնագիրք)

ՄԱՍ Ա – ԿԻՐԱՐԿՈՒՄԸ	Ընդհանուր դրույթներ
1.	
1.1.	Սահմանումները
1.2.	Նպատակները
1.3.	Կիրառումը
1.4.	Անվտանգության կառավարման համակարգին (ԱԿՀ) ներկայացվող գործառնության պահանջները
2.	Անվտանգության եւ շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքականությունը
3.	Ընկերության պարտականությունները եւ լիազորությունները
4.	Պատասխանատու անձը (անձինք)
5.	Նավապետի պարտականությունները եւ լիազորությունները
6.	Միջոցները եւ անձնակազմը
7.	Նավի վրա իրականացվող գործողությունների ծրագրերի մշակումը
8.	Արտակարգ իրավիճակների դեպքում պատրաստվածությունը
9.	Անհամապատասխանությունների, վթարների եւ վտանգավոր իրավիճակների մասին հաշվետվություններն ու դրանց վերլուծությունը

10. Նավի եւ սարքավորումների տեխնիկական սպասարկումը
11. Փաստաթղթերը
12. Ընկերության կողմից իրականացվող ստուգումները, վերանայումը եւ գնահատումը Մաս Բ. Հավաստագրումը եւ ստուգումները
13. Հավաստագրումը եւ պարբերական ստուգումները
14. Միջանկյալ հավաստագրումը
15. Ստուգումները
16. Հավաստագրերի ձեւերը

«ՆԱՎԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՂՏՈՏՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

(ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԱԿՄ))

ՄԱՍ Ա. ԿԻՐԱՐԿՈՒՄԸ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սահմանումներ

Հետեւյալ սահմանումները կիրառվում են սույն Կանոնագրքի Ա եւ Բ մասերի նկատմամբ:

1.1.1. «Անվտանգության կառավարման միջազգային(ԱԿՄ) կանոնագիրք» նշանակում է «Նավերի անվտանգ շահագործման եւ աղտոտման կանխարգելման մասին» կառավարման միջազգային կանոնագիրք, որն ընդունվել է Ասամբլեայի կողմից եւ կարող է փոփոխվել Կազմակերպության կողմից:

1.1.2. «Ընկերություն» նշանակում է նավի սեփականատեր կամ ցանկացած այլ կազմակերպություն կամ անձ, ինչպես, օրինակ՝ կառավարիչ, կամ նավն առանց անձնակազմի վարձող անձ, ով պատասխանատվություն է ստանձնել շահագործելու նավը, եւ ով այդ պատասխանատվությունն ստանձնելիս համաձայնվել է կատարել Կանոնագրքով նախատեսված բոլոր պարտականությունները եւ կրել ամբողջ պատասխանատվությունը:

1.1.3. «Վարչական մարմին» նշանակում է այն երկրի Կառավարությունը, որի դրոշի ներքո նավն իրավունք ունի նավարկելու:

1.1.4. «Անվտանգության կառավարման համակարգ» նշանակում է հստակ կառուցվածքով եւ փաստաթղթերում նշված համակարգ, որն ընկերության անձնակազմին հնարավորություն է տալիս արդյունավետորեն իրականացնելու անվտանգության եւ շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքականությունը:

1.1.5. «Համապատասխանության փաստաթուղթ» նշանակում է սույն Կանոնագրքի պահանջները բավարարող Ընկերությանը տրամադրված փաստաթուղթ:

1.1.6. «Անվտանգության կառավարման հավաստագիր» նշանակում է նավին տրամադրված փաստաթուղթ, որը հավաստում է, որ Ընկերությունը եւ նավի վրա աշխատող ղեկավար անձնակազմը գործում են հաստատված անվտանգության կառավարման համակարգի պահանջներին համապատասխան:

1.1.7. «Օբյեկտիվ ապացույց» նշանակում է քանակական կամ որակական տեղեկություններ, տվյալներ կամ փաստի վերաբերյալ հայտարարություններ անվտանգության կամ անվտանգության կառավարման համակարգի տարրի գոյության կամ իրականացման մասին, որոնք հիմնված են դիտարկումների, չափումների կամ թեստավորման վրա, եւ որոնք կարող են ստուգվել:

1.1.8. «Դիտարկում» նշանակում է փաստի վերաբերյալ հայտարարություն, որն արվել է անվտանգության կառավարման աուդիտի ժամանակ եւ հիմնավորված է օբյեկտիվ ապացույցներով:

1.1.9. «Անհամապատասխանություն» նշանակում է դիտարկված իրավիճակ, որի ժամանակ ձեռք բերված օբյեկտիվ ապացույցները վկայում են որեւէ պահանջ չկատարելը:

1.1.10. «Լուրջ անհամապատասխանություն» նշանակում է բացահայտվող խախտում, որը լուրջ վտանգ է ներկայացնում անձնակազմի կամ նավի, կամ շրջակա միջավայրի համար, եւ որի դեմ պետք է անմիջապես ձեռնարկվեն ուղղիչ միջոցներ, եւ որն առաջացել է սույն Կանոնագիրքն արդյունավետ եւ համակարգված ձեռով չկիրարկելու հետեւանքով:

1.1.11. «Գործողության ժամկետի սպառման ամսաթիվ» նշանակում է յուրաքանչյուր տարվա այն ամիսը եւ ամսաթիվը, որը համընկնում է համապատասխան փաստաթղթի կամ հավաստագրի գործողության ժամկետի սպառման ամսաթվի հետ:

1.1.12. «Կոնվենցիա» նշանակում է «Ծովում մարդկանց կյանքի անվտանգության մասին» 1974 թվականի միջազգային կոնվենցիա՝ փոփոխություններով:

1.2. Նպատակները

1.2.1. Կանոնագրքի նպատակներն են ծովում անվտանգություն ապահովելը, մարդկանց հասցվող վնասվածքները կամ մարդկային զոհերը կանխելը եւ շրջակա միջավայրի, մասնավորապես, ծովային միջավայրի, ինչպես նաեւ սեփականությունը վնասելուց խուսափելը:

1.2.2. Ընկերության անվտանգության կառավարման նպատակներով պետք է, մասնավորապես՝

1.2.2.1. նախատեսվի անվտանգ գործելակերպ նավի շահագործման համար եւ անվտանգ աշխատանքային միջավայր,

1.2.2.2. ապահովվեն երաշխիքներ բոլոր նշված ռիսկերի դեմ եւ

1.2.2.3. շարունակաբար բարելավվեն ցամաքի եւ նավի վրա աշխատող անձնակազմի՝ անվտանգության կառավարման հմտությունները, այդ թվում՝ անվտանգության եւ շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված արտակարգ իրավիճակներին նախապատրաստվելը:

1.2.3. Անվտանգության կառավարման համակարգով պետք է ապահովվի, որ՝

1.2.3.1. պահպանվեն պարտադիր կանոնները եւ կանոնակարգերը, եւ

1.2.3.2. որ հաշվի առնվեն ընկերության, վարչական մարմինների, դասակարգող խմբերի եւ նավագնացության բնագավառի կազմակերպությունների կողմից առաջարկված կիրառելի կանոնագրքերը, ուղեցույցները եւ չափանիշները:

1.3. Կիրառումը.

Սույն Կանոնագրքի պահանջները կարող են կիրառվել բոլոր նավերի նկատմամբ:

1.4. Անվտանգության կառավարման համակարգին (ԱԿՀ) ներկայացվող գործառնության չափանշանները

Յուրաքանչյուր ընկերություն պետք է մշակի, կիրառի եւ պահպանի անվտանգության կառավարման համակարգ (ԱԿՀ), որը ներառում է հետեւյալ ֆունկցիոնալ պահանջները.

1.4.1. անվտանգություն եւ շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքականություն,

1.4.2. հրահանգներ եւ ընթացակարգեր՝ նավերի անվտանգ շահագործումը եւ շրջակա միջավայրի պաշտպանությունը, միջազգային եւ դրոշի պետության օրենսդրության համաձայն՝ ապահովելու

1.4.3. ցամաքի եւ նավի վրա աշխատող անձնակազմի իրավասությունները եւ հաղորդակցման ուղիների սահմանված շրջանակը,

1.4.4. դժբախտ պատահարների եւ սույն Կանոնագրքի դրույթների հետ անհամապատասխանության վերաբերյալ զեկուցելու ընթացակարգերը,

1.4.5. արտակարգ իրավիճակներին նախապատրաստվելու եւ արձագանքելու ընթացակարգերը եւ

1.4.6. ներքին աուդիտի եւ ղեկավարության կողմից իրականացվող ստուգումների ընթացակարգերը:

2. Անվտանգության եւ շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքականությունը

2.1. Ընկերությունը պետք է մշակի անվտանգության եւ շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքականություն, որով պետք է սահմանվի, թե ինչպես են իրականացվելու 1.2 պարբերությամբ նշված նպատակները:

2.2. Ընկերությունը պետք է ապահովի, որ քաղաքականությունն իրականացվի եւ պահպանվի կազմակերպության բոլոր մակարդակներում՝ ինչպես նավի վրա, այնպես էլ առափնյա տարածքներում:

3. Ընկերության պարտականությունները եւ լիազորությունները

3.1. Եթե այն մարմինը, որը պատասխանատու է նավի շահագործման համար, նավի սեփականատերը չէ, ապա սեփականատերը պետք է վերահսկող մարմնին հայտնի այդ մարմնի ամբողջական անունը եւ մանրամասն տվյալները:

3.2. Ընկերությունը պետք է սահմանի եւ փաստաթղթերով հիմնավորի անվտանգության եւ աղտոտման կանխման հետ կապված եւ դրան ուղղված աշխատանքները ղեկավարող, իրականացնող եւ ստուգող բոլոր աշխատողների պարտավորությունները, լիազորությունները եւ փոխհարաբերությունները:

3.3. Ընկերությունը պետք է ապահովի, որ համապատասխան ռեսուրսներ եւ ցամաքից օժանդակություն տրամադրվեն, որպեսզի պատասխանատու անձը կամ անձինք կարողանան իրականացնել իրենց գործառույթները:

4. Պատասխանատու անձը (անձինք)

Յուրաքանչյուր նավի անվտանգ շահագործումն ապահովելու եւ ընկերության ու նավի վրա աշխատանքներում ներգրավված անձանց միջեւ կապ հաստատելու համար յուրաքանչյուր ընկերություն, անհրաժեշտության դեպքում, պետք է ցամաքում նշանակի մեկ պատասխանատու անձ կամ այն անձանց, ովքեր հնարավորություն կունենան անմիջական կապ հաստատելու բարձրաստիճան ղեկավարության հետ: Պատասխանատու անձի կամ անձանց պարտավորությունների եւ լիազորությունների մեջ պետք է ներառվեն յուրաքանչյուր նավի շահագործման առումով անվտանգության եւ աղտոտման կանխման մոնիթորինգը եւ համապատասխան ռեսուրսների ու ավիային օժանդակության նպատակային օգտագործումը:

5. Նավապետի պարտավորությունները եւ լիազորությունները

5.1. Ընկերությունը պետք է հստակորեն սահմանի եւ փաստաթղթով հիմնավորի նավապետի պարտականությունները՝ կապված

5.1.1. ընկերության անվտանգության ապահովման եւ շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված քաղաքականության իրականացման,

5.1.2. անձնակազմին այդ քաղաքականությանը համապատասխան գործելը խրախուսելու,

5.1.3. հստակ եւ պարզ եղանակով համապատասխան կարգադրությունները եւ հրահանգները տալու,

5.1.4. նշված պահանջների կատարումը ստուգելու եւ

5.1.5. ԱԿՀ-ի աշխատանքները ստուգելու եւ դրա թերությունների վերաբերյալ ցամաքում աշխատող ղեկավարությանը տեղեկացնելու հետ:

5.2. Ընկերությունը պետք է ապահովի, որ նավի վրա ԱԿՀ-ի շահագործման փաստաթղթերում հստակ նշվեն նավապետի պարտականությունները: Ընկերությունը պետք է ԱԿՀ-ի փաստաթղթերում սահմանի, որ նավապետն անվտանգության ապահովման եւ աղտոտման կանխման վերաբերյալ որոշումներ կայացնելու եւ, անհրաժեշտության դեպքում, ընկերության օժանդակությունը հայցելու բացառիկ լիազորություն եւ պարտավորություն ունի:

6. Միջոցները եւ անձնակազմը

6.1. Ընկերությունը պետք է ապահովի, որ նավապետը՝

6.1.1. ունենա համապատասխան որակավորում՝ այդ պաշտոնն ստանձնելու համար.

6.1.2. միանգամայն ծանոթ լինի ընկերության ԱԿՀ-ին եւ

6.1.3. ստանա անհրաժեշտ օժանդակություն՝ նավապետի իր պարտականություններն անվտանգ կատարելու համար:

6.2. Ընկերությունը պետք է ապահովի, որ յուրաքանչյուր նավի անձնակազմ կազմված լինի որակավորված, հավաստագրված եւ առողջական պահանջները բավարարող նավաստիներից՝ ազգային եւ միջազգային պահանջներին համապատասխան:

6.3. Ընկերությունը պետք է սահմանի ընթացակարգեր՝ նոր անձնակազմին եւ անվտանգ նավարկության ու շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված նոր առաջադրանքներ ստացած անձնակազմին պատշաճ մակարդակով իրենց պարտավորություններին ծանոթացնելու համար:

Պետք է նշվեն, փաստաթղթերով հիմնավորվեն եւ տրվեն այն հրահանգները, որոնք պետք է տրվեն նավարկությունից առաջ:

6.4. Ընկերությունը պետք է ապահովի, որ ընկերության ԱԿՀ-ի աշխատանքներում ներգրավված աշխատակիցները համապատասխան պատկերացում ունենան կանոնների, կանոնակարգերի, կանոնագրքերի եւ ուղեցույցների մասին:

6.5. Ընկերությունը պետք է սահմանի եւ կիրառի ընթացակարգեր՝ պարզելու համար՝ արդյոք անհրաժեշտ են վերապատրաստման դասընթացներ՝ ԱԿՀ-ին օժանդակելու համար եւ ապահովի, որ նման դասընթացները կազմակերպվեն բոլոր համապատասխան աշխատողների համար:

6.6. Ընկերությունը պետք է սահմանի ընթացակարգեր, որոնց միջոցով նավի անձնակազմի անդամները պետք է իրենց աշխատանքային լեզվով կամ այլ լեզուներով համապատասխան տեղեկություններ ստանան ԱԿՀ-ի վերաբերյալ:

6.7. Ընկերությունը պետք է ապահովի, որ նավի անձնակազմի անդամները ԱԿՀ-ի հետ կապված իրենց գործառույթներն իրականացնելիս կարողանան միմյանց հետ արդյունավետորեն շփվել:

7. Նավի վրա իրականացվող գործողությունների ծրագրերի մշակումը

Ընկերությունը պետք է սահմանի ընթացակարգեր՝ ծրագրերի եւ հրահանգների համար, այդ թվում, անհրաժեշտության դեպքում, նավի վրա իրականացվող առանցքային

գործողությունների ստուգացանկեր՝ կապված նավի անվտանգ նավարկության եւ աղտոտման կանխարգելման հետ: Պետք է սահմանվեն եւ որակավորված անձնակազմին պետք է հանձնարարվեն դրանց հետ կապված տարբեր առաջադրանքներ:

8. Արտակարգ իրավիճակների դեպքում պատրաստվածությունը

8.1. Ընկերությունը պետք է սահմանի ընթացակարգեր՝ նավի վրա հնարավոր արտակարգ իրավիճակները բացահայտելու, նկարագրելու եւ դրանց արձագանքելու համար:

8.2. Ընկերությունը պետք է մշակի ծրագրեր վարժանքների համար՝ արտակարգ գործողություններին նախապատրաստվելու համար:

8.3. ԱԿՀ-ում պետք է նախատեսվեն միջոցառումներ, որոնք կապահովեն, որ ընկերությունը ցանկացած ժամանակ կարողանա արձագանքել նավի վրա ի հայտ եկած վտանգներին, դժբախտ պատահարներին եւ արտակարգ իրավիճակներին:

9. Անհամապատասխանության, վթարների եւ վտանգավոր իրավիճակների մասին հաշվետվությունները եւ դրանց վերլուծությունը

9.1. ԱԿՀ-ն պետք է ներառի այնպիսի ընթացակարգեր, որոնք ապահովում են, որ անհամապատասխանությունների, դժբախտ պատահարների եւ վտանգավոր իրավիճակների մասին զեկուցեն ընկերությանը, դրանք ուսումնասիրվում եւ վերլուծվում են՝ նավարկության անվտանգությունը եւ աղտոտման կանխարգելումը բարելավելու նպատակով:

9.2. Ընկերությունը պետք է սահմանի ուղղիչ գործողությունների իրականացման ընթացակարգեր:

10. Նավի եւ սարքավորումների պահպանումը

10.1. Ընկերությունը պետք է սահմանի ընթացակարգեր՝ ապահովելու, որ նավը պահպանվի համապատասխան կանոնների եւ կանոնակարգերի դրույթներին եւ այն հավելյալ պահանջներին համապատասխան, որոնք կարող են սահմանվել ընկերության կողմից:

10.2. Այս պահանջները կատարելիս ընկերությունը պետք է ապահովի, որ՝

10.2.1. ստուգումներն իրականացվեն համապատասխան պարբերականությամբ.

10.2.2. յուրաքանչյուր անհամապատասխանություն եւ դրա պատճառը, եթե այն հայտնի է, զեկուցվի.

10.2.3. ձեռնարկվեն համապատասխան ուղղիչ գործողություններ եւ

10.2.4. պահպանվեն տվյալներ այս աշխատանքների վերաբերյալ:

10.3. Ընկերությունը ԱԿՀ-ի համար պետք է սահմանի ընթացակարգեր, որոնց միջոցով հնարավոր կլինի հայտնաբերել հանկարծակի շահագործական խափանումը սարքավորումներում եւ տեխնիկական համակարգերում. որը կարող է ստեղծել վտանգավոր իրավիճակներ: ԱԿՀ-ում պետք է նախատեսվեն հատուկ միջոցներ՝ ուղղված նման սարքավորումների կամ համակարգերի վստահելիությունը խթանելուն: Այս միջոցների մեջ պետք է մտնեն վթարային համակարգերի եւ սարքավորումների կամ անընդհատ չօգտագործվող տեխնիկական համակարգերի թեստավորումը:

10.4 10.2. պարբերությամբ նշված ստուգումները, ինչպես նաեւ 10.3 պարբերությամբ նշված միջոցները պետք է ներառվեն նավի տեխնիկական սպասարկման միջոցառումների մեջ:

11. Փաստաթղթերը

11.1. Ընկերությունը պետք է մշակի եւ կիրառի ընթացակարգեր՝ ԱԿՀ-ի հետ կապված բոլոր փաստաթղթերը եւ տվյալները վերահսկելու համար:

11.2. Ընկերությունը պետք է ապահովի, որ՝

11.2.1. վավերական փաստաթղթերը հասանելի լինեն բոլոր համապատասխան վայրերում,

11.2.2. փաստաթղթերում կատարվող փոփոխությունները վերանայվեն եւ հաստատվեն նման լիազորություն ունեցող աշխատակիցների կողմից եւ

11.2.3. ուժը կորցրած փաստաթղթերն անմիջապես ոչնչացվեն:

11.3. ԱԿՀ-ն նկարագրելու եւ գործարկելու համար օգտագործվող փաստաթղթերը կարելի է անվանել «անվտանգության կառավարման միջոցառումների ձեռնարկ»: Փաստաթղթերը պետք է պահվեն այն ձեւով, որն ընկերությունը համարում է ամենաարդյունավետը: Յուրաքանչյուր նավում պետք է պահվեն այդ նավի հետ կապված բոլոր փաստաթղթերը:

12. Ընկերության կողմից իրականացվող ստուգումները, վերանայումները եւ գնահատումը

12.1. Ընկերությունը պետք է իրականացնի անվտանգության ներքին աուդիտ՝ ստուգելու համար՝ արդյոք անվտանգ նավարկություն ապահովվելուն եւ աղտոտման կանխմանն ուղղված գործողությունները համապատասխանում են ԱԿՀ-ին:

12.2. Ընկերությունը պետք է պարբերաբար գնահատի արդյունավետությունը եւ, անհրաժեշտության դեպքում, վերանայի ԱԿՀ-ն՝ ընկերության կողմից սահմանված ընթացակարգերին համապատասխան:

12.3. Աուդիտները եւ հնարավոր ուղղիչ գործողությունները պետք է փաստաթղթերում նշված ընթացակարգերին համապատասխան իրականացվեն:

12.4. Աուդիտ իրականացնող աշխատողները պետք է լինեն աուդիտի ենթարկվող բնագավառներից անկախ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա հնարավոր չէ՝ հաշվի առնելով ընկերության մասշտաբը եւ բնույթը:

12.5. Աուդիտների եւ ստուգումների արդյունքները պետք է ներկայացվեն բոլոր այն աշխատակիցներին, ովքեր որեւէ պատասխանատվություն են կրում տվյալ բնագավառում:

12.6. Տվյալ բնագավառի համար պատասխանատու ղեկավարները պետք է հայտնաբերված թերությունների ուղղությամբ ժամանակին ձեռնարկեն ուղղիչ գործողություններ:

ՄԱՍ Բ. ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

13. Հավաստագրումը եւ պարբերական ստուգումները

13.1. Նավը պետք է շահագործվի այն ընկերության կողմից, որին տրամադրվել է Համապատասխանության փաստաթուղթ կամ Համապատասխանության միջանկյալ փաստաթուղթ՝ 14.1 պարբերության համաձայն:

13.2. Համապատասխանության փաստաթուղթը տրամադրվում է վերահսկող մարմնի, այդ մարմնի կողմից ճանաչված կազմակերպության կամ, վերահսկող մարմնի դիմումի հիման վրա, Կոնվենցիային անդամակցող մեկ այլ կառավարության կողմից, այն ընկերությանը, որը բավարարում է սույն Կանոնագրքի պահանջները վերահսկող մարմնի կողմից սահմանված ժամկետով, որը չպետք է գերազանցի հինգ տարին: Նման փաստաթուղթն ընդունվում է որպես ապացույց այն մասին, որ Ընկերությունը կարող է բավարարել սույն Կանոնագրքի պահանջները:

13.3. Համապատասխանության փաստաթուղթը վավերական է միայն նավերի այն տեսակների համար, որոնք նշված են փաստաթղթում: Տվյալ տեսակի նշումը փաստաթղթում պետք է կատարվի նավերի այն տեսակների վերաբերյալ, որոնք անցել են նախնական ստուգումը: Նավերի մյուս տեսակները պետք է ավելացվեն միայն այն բանից հետո, երբ ստուգվի, որ Ընկերությունը կարող է բավարարել նավի այդ տեսակների համար՝

սույն Կանոնագրքով սահմանված պահանջները: Այս համատեքստում նավի տեսակներն այն տեսակներն են, որոնք նշված են Կոնվենցիայի IX/1 կարգավորման մեջ:

13.4. Համապատասխանության փաստաթղթի վավերականությունը պետք է ամեն տարի ստուգվի վերահսկող մարմնի կամ այդ մարմնի կողմից ճանաչված կազմակերպության կամ վերահսկող մարմնի խնդրանքով՝ Կոնվենցիային անդամակցող մեկ այլ կառավարության կողմից, գործողության ժամկետը լրանալուց հետո կամ առաջ՝ երեք ամսվա ընթացքում:

13.5. Համապատասխանության փաստաթուղթը կազմում են իշխանությունները կամ իշխանությունների խնդրանքով՝ Կոնվենցիային անդամակցող մեկ այլ կառավարության կողմից, որը տրամադրել է փաստաթուղթը, եթե 13.4 կետով նախատեսված տարեկան ստուգումը չի պահանջվում կամ, եթե առկա են սույն Կանոնագրքի հետ լուրջ անհամապատասխանությունների վերաբերյալ ապացույցներ:

13.5.1. Բոլոր կից անվտանգության կառավարման հավաստագրերը եւ (կամ) անվտանգության կառավարման միջանյալ հավաստագրերը նույնպես պետք է կազմվեն, եթե կազմվում է համապատասխանության փաստաթուղթը:

13.6. Համապատասխանության փաստաթղթի պատճենը պետք է պահվի նավում, որպեսզի նավապետը, անհրաժեշտության դեպքում, կարողանա ներկայացնել այն վերահսկող մարմնին կամ այդ մարմնի կողմից ճանաչված կազմակերպությանը՝ ստուգման կամ Կոնվենցիայի IX/6.2 կարգավորման մեջ նշված այլ նպատակներով: Փաստաթղթի պատճենը վավերացնելը կամ հավաստագրելն անհրաժեշտ չէ:

13.7. Անվտանգության կառավարման հավաստագիրը պետք է տրամադրվի նավին հինգ տարին չգերազանցող ժամկետով՝ վերահսկող մարմնի կամ այդ մարմնի կողմից ճանաչված կազմակերպության կողմից կամ վերահսկող մարմնի խնդրանքով՝ Կոնվենցիային անդամակցող մեկ այլ կառավարության կողմից: Անվտանգության կառավարման հավաստագիրը պետք է տրամադրվի հաստատելուց հետո այն, որ Ընկերությունը եւ նավի վրա աշխատող ղեկավար անձնակազմը գործում են հաստատված անվտանգության կառավարման համակարգի պահանջներին համապատասխան: Նման փաստաթուղթն ընդունվում է որպես ապացույց, որ նավը համապատասխանում է սույն Կանոնագրքի պահանջներին:

13.8. Անվտանգության կառավարման հավաստագրի վավերականությունը պետք է առնվազն մեկ անգամ միջանկյալ ստուգվի վերահսկող մարմնի կամ այդ մարմնի կողմից ճանաչված կազմակերպության կողմից կամ վերահսկող մարմնի խնդրանքով՝

Կոնվենցիային անդամակցող մեկ այլ կառավարության կողմից: Եթե պետք է անցկացվի միայն մեկ միջանկյալ ստուգում եւ Անվտանգության կառավարման հավաստագրի վավերականության ժամկետը հինգ տարի է, այն պետք է անցկացվի Անվտանգության կառավարման հավաստագրի գործողության ժամկետի ավարտման երկրորդ եւ երրորդ ամսաթվերի միջեւ:

13.9. 13.5.1 պարբերության պահանջներից բացի՝ Անվտանգության կառավարման հավաստագիրը պետք է կազմվի վերհսկող մարմնի կամ այդ մարմնի խնդրանքով՝ Կոնվենցիային անդամակցող մեկ այլ կառավարության կողմից, որն այն տրամադրել է, երբ 13.8 պարբերությամբ անհրաժեշտ միջանկյալ ստուգում անցկացնելը չեն պահանջում կամ եթե առկա են սույն Կանոնագրքի հետ խիստ անհամապատասխանության ապացույցներ:

13.10. Անկախ 13.2 եւ 13.7 պարբերությունների պահանջներից, երբ գործողության ժամկետի երկարաձգման հաստատումն ավարտվում է գործող համապատասխանության փաստաթղթի կամ անվտանգության կառավարման հավաստագրի գործողության ժամկետի ավարտից առաջ երեք ամսվա ընթացքում, նոր համապատասխանության փաստաթուղթը կամ անվտանգության կառավարման նոր հավաստագիրը պետք է գործի գործողության ժամկետի երկարաձգման հաստատումը վերջացնելու օրվանից՝ հինգ տարին չգերազանցող ժամկետով՝ սկսած գործող համապատասխանության փաստաթղթի կամ անվտանգության կառավարման հավաստագրի ժամկետը լրանալու ամսաթվից:

13.11. Եթե գործողության ժամկետի երկարաձգման հաստատումն ավարտվում է գործող համապատասխանության փաստաթղթի կամ անվտանգության կառավարման հավաստագրի գործողության ժամկետի ավարտից երեք ամիսը լրանալուց առաջ, նոր համապատասխանության փաստաթուղթը կամ անվտանգության կառավարման նոր հավաստագիրը պետք է գործի գործողության ժամկետի երկարաձգման հաստատումը վերջացնելու օրվանից՝ հինգ տարին չգերազանցող ժամկետով՝ սկսած ժամկետի երկարաձգման հաստատումը վերջացնելու օրվանից:

14. Միջանկյալ հավաստագրում

14.1. Համապատասխանության միջանկյալ փաստաթուղթ կարող է տրամադրվել՝ սույն Կանոնագրքի նախնական իրականացումը հնարավոր դարձնելու համար, եթե

1. ընկերությունը նոր է հիմնադրվել կամ

2. Նոր տեսակի նավերն ընդգրկվում են առկա համապատասխանության փաստաթղթում՝ ստուգելուց հետո այն, որ ընկերությունն ունի անվտանգության կառավարման համակարգ, որը բավարարում է սույն Կանոնագրքի 1.2.3 պարբերության նպատակները՝ պայմանով, որ ընկերությունը նախագծեր ունի անվտանգության կառավարման համակարգի պահանջները կատարելու համար՝ բավարարելով սույն Կանոնագրքի բոլոր պահանջները համապատասխանության միջանկյալ փաստաթղթի վավերականության ժամկետի ընթացքում: Անվտանգության կառավարման նման հավաստագիրը պետք է տրամադրվի տասներկու ամիսը չգերազանցող ժամկետով վերահսկող մարմնի, այդ մարմնի կողմից ճանաչված կազմակերպության կամ վերահսկող մարմնի դիմումի հիման վրա, Կոնվենցիային անդամակցող մեկ այլ կառավարության կողմից: Համապատասխանության միջանկյալ փաստաթղթի պատճենը պետք է պահվի նավում, որպեսզի նավապետը, անհրաժեշտության դեպքում, կարողանա ներկայացնել այն վերահսկող մարմնին կամ այդ մարմնի կողմից ճանաչված կազմակերպությանը ստուգման կամ Կոնվենցիայի IX/6.2 կարգավորման մեջ նշված այլ նպատակներով: Փաստաթղթի պատճենը վավերացնելը կամ հավաստագրելն անհրաժեշտ չէ:

14.2. Անվտանգության կառավարման միջանկյալ հավաստագիրը կարող է տրամադրվել

1. նոր նավերի դեպքում,

2. երբ կազմակերպությունը պարտականություն է ստանձնում նավի շահագործման համար, որը նոր է կազմակերպության համար կամ 3. երբ նավը դրոշն է փոխում:

Անվտանգության կառավարման նման հավաստագիրը պետք է տրամադրվի վեց ամիսը չգերազանցող ժամկետով՝ վերահսկող մարմնի, այդ մարմնի կողմից ճանաչված կազմակերպության կամ վերահսկող մարմնի դիմումի հիման վրա, Կոնվենցիային անդամակցող մեկ այլ կառավարության կողմից:

14.3. Վարչական մարմինը, այդ մարմնի կողմից ճանաչված կազմակերպությունը կամ վերահսկող մարմնի դիմումի հիման վրա Կոնվենցիային անդամակցող մեկ այլ կառավարություն կարող են հատուկ դեպքերում երկարաձգել Անվտանգության կառավարման միջանկյալ հավաստագրի վավերականությունն այնպիսի ժամկետով, որը չպետք է գերազանցի վեց ամիսը՝ սկսած գործողության ժամկետը լրանալու ամսաթվից:

14.4. Անվտանգության կառավարման միջանկյալ հավաստագիրը կարող է տրամադրվել այն բանից հետո, երբ հաստատվում է, որ

- 1) համապատասխանության փաստաթուղթը կամ համապատասխանության միջանկյալ փաստաթուղթը համապատասխանում է տվյալ նավին,
- 2) ընկերության կողմից տվյալ նավի համար նախատեսված անվտանգության կառավարման համակարգը ներառում է սույն Կանոնագրքի առանցքային տարրերը եւ գնահատվել է Համապատասխանության փաստաթղթի տրամադրման համար աուդիտի ժամանակ կամ ներկայացվել է Համապատասխանության միջանկյալ փաստաթղթի տրամադրման համար,
- 3) ընկերությունը ծրագրել է աուդիտի ենթարկել նավը երեք ամսվա ընթացքում,
- 4) նավապետը եւ նավաստիները ծանոթ են անվտանգության կառավարման համակարգին եւ դրա իրականացման համար ծրագրված գործողություններին,
- 5) նավարկությունից առաջ տրվում են որպես կարելու առանձնացված հրահանգները եւ,
- 6) անվտանգության կառավարման համակարգի վերաբերյալ համապատասխան տեղեկությունները տրամադրվել են նավի անձնակազմին հասկանալի աշխատանքային լեզվով կամ լեզուներով:

15. Ստուգում

15.1. Բոլոր ստուգումները, որոնք պահանջվում են սույն Կանոնագրքի դրույթներով, պետք է իրականացվեն վերահսկող մարմնի համար ընդունելի ընթացակարգերին համապատասխան՝ հաշվի առնելով Կազմակերպության կողմից մշակված ուղեցույցները (10):

16. Հավաստագրերի ձեւերը

16.1. Համապատասխանության փաստաթուղթը, Անվտանգության կառավարման հավաստագիրը, Համապատասխանության միջանկյալ փաստաթուղթը եւ Անվտանգության կառավարման միջանկյալ հավաստագիրը պետք է կազմվեն սույն Կանոնագրքի հավելվածում ներկայացված նմուշների ձեւով: Եթե օգտագործվող լեզուն ո՛չ ֆրանսերեն է, ո՛չ անգլերեն, տեքստը պետք է ընդգրկի այս լեզուներից որեւէ մեկով թարգմանությունը:

16.2. Բացի 13.3 պարբերությամբ նշված պահանջներից՝ Համապատասխանության փաստաթղթով եւ Համապատասխանության միջանկյալ փաստաթղթով նշված նավերի տեսակները կարող են հաստատվել՝ անվտանգության կառավարման համակարգում նկարագրված նավերի շահագործման առումով սահմանափակումները ներկայացնելու համար:

Հավելված

**Համապատասխանության փաստաթղթի, Անվտանգության կառավարման
հավաստագրի, Համապատասխանության միջանկյալ փաստաթղթի եւ Անվտանգության
կառավարման միջանկյալ հավաստագրի ձեւերը**

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

(Պաշտոնական կնիք) (Պետություն)

Հավաստագիր թիվ

Տրամադրվել է

«ԾՈՎՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1974 թվականի ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ
դրույթների համաձայն, որը փոփոխվել է՝

.....Կառավարության
վերահսկողության ներքո՝

(պետության անունը)

կողմից՝

>(լիազորված անձի կամ կազմակերպության կողմից)

Ընկերության անվանումը եւ հասցեն՝

...

...

(Տե՛ս ԱԿՄ Կանոնագրքի 1.1.2 պարբերությունը)

ՍԱ ՀԱՎԱՍՏՈՒՄ Է, որ Ընկերության անվտանգության կառավարման համակարգը
ենթարկվել է աուդիտի, եւ որ այն համապատասխանում է Նավերի անվտանգ
շահագործման եւ աղտոտման կանխարգելման կառավարման միջազգային կանոնագրքի
(ԱԿՄ կանոնագրքի) պահանջներին՝ ստորեւ ներկայացված նավերի տեսակների մասով
(անհրաժեշտության դեպքում՝ ջնջել):

Ուղեորատար նավ

Արագընթաց ուղեորատար նավ

Արագընթաց բեռնատար նավ

Խուռնաբեռն փոխադրումներ իրականացնող նավ

Նավթատար նավ

Քիմիական նյութեր փոխադրող նավ

Գազատար նավ

Շարժական ծովային հորատող սարք

Այլ բեռնատար նավ

Սույն համապատասխանության փաստաթուղթը վավեր է մինչև, ենթակա է պարբերական ստուգման

Տրվել է՝

(Փաստաթղթի տրամադրման վայրը)

Տրման ամսաթիվը

...

(Համապատասխան լիազորություններով օժտված եւ փաստաթուղթը տրամադրող պաշտոնյայի ստորագրությունը)

(Տրամադրող մարմնի դրոշմը կամ կնիքը՝ ըստ անհրաժեշտության)

Հավաստագիր թիվ

ՏԱՐԵԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

ՍԱ ՀԱՎԱՍՏՈՒՄ Է, որ Կոնվենցիայի IX/6.1 կարգավորման եւ ԱԿՄ կանոնագրքի 13.4 պարբերության համաձայն իրականացված պարբերական ստուգման ժամանակ հաստատվել է անվտանգության կառավարման համակարգի համապատասխանությունը ԱԿՄ կանոնագրքի պահանջներին:

1-ին ՏԱՐԵԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ	Ստորագրված է ...
	Իրավասու մարմնի ստորագրությունը
	Վայրը՝ ...
	Ամսաթիվ ...
2-րդ ՏԱՐԵԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ	Ստորագրված է ...
	Իրավասու մարմնի ստորագրությունը
	Վայրը՝ ...
	Ամսաթիվ ...
3-րդ ՏԱՐԵԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ	Ստորագրված է ...
	Իրավասու մարմնի ստորագրությունը
	Վայրը ...
	Ամսաթիվ ...
4-րդ ՏԱՐԵԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ	Ստորագրված է ...
	Իրավասու մարմնի ստորագրությունը
	Վայրը ...
	Ամսաթիվ ...

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

(Պաշտոնական կնիք) (Պետություն)

Հավաստագիր թիվ

Տրամադրվել է

«ԾՈՎՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1974թվականի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ դրույթների համաձայն, որը փոփոխվել է

.....Կառավարության
վերահսկողության ներքո՝

(պետության անունը)

կողմից՝

>(լիազորված անձի կամ կազմակերպության կողմից)

Նավի անվանումը՝ ...

Տարբերակող թիվ կամ տառեր՝ ...

Գրանցման նավահանգիստը՝ ...

Նավի տեսակը (*)՝ ...

Համախառն տոննաժը՝ ...

ԾՄԿ-ի թիվը՝ ...

Ընկերության անվանումը եւ հասցեն՝ ...

(Տե՛ս ԱԿՄ Կանոնագրքի 1.1.2 պարբերությունը)

ՍԱ ՀԱՎԱՍՏՈՒՄ է, որ նավի անվտանգության կառավարման համակարգը ենթարկվել է աուդիտի, եւ այն համապատասխանում է «Նավերի անվտանգ շահագործման եւ աղտոտման կանխարգելման մասին» կառավարման միջազգային կանոնագրքի (ԱԿՄ կանոնագրքի) պահանջներին՝ հիմնվելով այն փաստի վրա, որ ստուգվել է, որ Ընկերության Համապատասխանության փաստաթուղթը կարող է կիրառվել նավի այս տեսակի նկատմամբ:

Անվտանգության կառավարման հավաստագիրը վավերական է մինչեւ, ենթակա է պարբերական ստուգման եւ համապատասխանության փաստաթուղթը վավերական է մնում:

Տրամադրվել է՝

(Փաստաթղթվի տրամադրման վայրը)

Տրամադրման ամսաթիվը

(Համապատասխան լիազորություններով օժտված եւ հավաստագիրը տրամադրող պաշտոնյայի ստորագրությունը)

(Տրամադրող մարմնի դրոշմը կամ կնիքը՝ ըստ անհրաժեշտության)

Հավաստագիր թիվ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՀԱՎԵԼՅԱԼ ՍՏՈՒԳՄԱՆ (ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՀԱՍՏԱՏՈՒՄ

ՍԱ ՀԱՎԱՍՏՈՒՄ Է, որ Կոնվենցիայի IX/6.1 կարգավորման եւ ԱԿՄ կանոնագրքի 13.8 պարբերության համաձայն իրականացված պարբերական ստուգման ժամանակ հաստատվել է անվտանգության կառավարման համակարգի համապատասխանությունը ԱԿՄ կանոնագրքի պահանջներին:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՈՒՄ (պետք է իրականացվի հավաստագրի գործողության ժամկետի ավարտման երկրորդ եւ երրորդ ամսաթվերի միջեւ)	Ստորագրված է ...
	Իրավասու մարմնի ստորագրությունը
	Վայրը՝ ...
	Ամսաթիվ ...
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍՏՈՒԳՈՒՄ	Ստորագրված է ...
	Իրավասու մարմնի ստորագրությունը
	Վայրը՝ ...
	Ամսաթիվ ...
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍՏՈՒԳՈՒՄ	Ստորագրված է ...
	Իրավասու մարմնի ստորագրությունը
	Վայրը՝ ...
	Ամսաթիվ ...
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍՏՈՒԳՈՒՄ	Ստորագրված է ...
	Իրավասու մարմնի ստորագրությունը

	Վայրը՝ ...
	Ամսաթիվ ...
(*) Անհրաժեշտության դեպքում Հղում է արվում իշխանությունների կողմից Անվտանգության կառավարման միջազգային (ԱԿՄ) կանոնագրքի իրականացման ուղեցույցների (բանաձև Ա.913 (22)) 3.4.1 պարբերությանը:	

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

(Պաշտոնական կնիք) (Պետություն)

Հավաստագիր թիվ

Տրամադրվել է

ԾՈՎՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 1974թ.,
դրույթների համաձայն, որը փոփոխվել է

.....Կառավարության
վերահսկողության ներքո՝

(պետության անունը)

կողմից՝

>(լիազորված անձի կամ կազմակերպության կողմից)

Ընկերության անվանումը եւ հասցեն՝ ...

(Տե՛ս ԱԿՄ Կանոնագրքի 1.1.2 պարբերությունը)

ՍԱ ՀԱՎԱՍՏՈՒՄ է, որ Ընկերության անվտանգության կառավարման համակարգը
համապատասխանում է «Նավերի անվտանգ շահագործման եւ աղտոտման
կանխարգելման մասին» կառավարման միջազգային կանոնագրքի (ԱԿՄ կանոնագրքի)
1.2.3 պարբերության նպատակներին՝ ստորեւ ներկայացված նավերի տեսակների մասով
(անհրաժեշտության դեպքում՝ ջնջել):

Ուղեւորատար նավ

Արագընթաց ուղեւորատար նավ

Արագընթաց բեռնատար նավ

Խոունաբեռն փոխադրումներ իրականացնող նավ

Նավթատար նավ

Քիմիական նյութեր փոխադրող նավ

Գազատար նավ

Շարժական ծովային հորատող սարք

Այլ բեռնատար նավ

Սույն համապատասխանության փաստաթուղթը վավեր է մինչև՝

.....

Տրամադրվել է՝ ...

(Փաստաթղթի տրամադրման վայրը)

Տրամադրման ամսաթիվը ...

(Համապատասխան լիազորություններով օժտված եւ փաստաթուղթը տրամադրող պաշտոնյայի ստորագրությունը)

(Տրամադրող մարմնի դրոշմը կամ կնիքը՝ ըստ անհրաժեշտության)

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

(Պաշտոնական կնիք) (Պետություն)

Հավաստագիր թիվ

Տրամադրվել է

ԾՈՎՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 1974թ., դրույթների համաձայն,

որը փոփոխվել է

.....Կառավարության

վերահսկողության ներքո՝

(պետության անունը)

կողմից՝

>(լիազորված անձի կամ կազմակերպության կողմից)

Նավի անվանումը՝ ...

Տարբերակող թիվ կամ տառեր՝ ...

Գրանցման նավահանգիստը՝ ...

Նավի տեսակը (*)՝ ...

Համախառն տոննաժը՝ ...

ԾՄԿ-ի թիվը՝...

Ընկերության անվանումը եւ հասցեն՝ ...

...

(Տե՛ս ԱԿՄ Կանոնագրքի 1.1.2 պարբերությունը)

ՍԱ ՀԱՎԱՍՏՈՒՄ Է ԱՅՆ, որ ԱԿՄ կանոնագրքի 14.4 պարբերության պահանջները կատարվել են, եւ որ Համապատասխանության փաստաթուղթը/Համապատասխանության միջանկյալ փաստաթուղթը (**) համապատասխանում է նավի այս տեսակին:

Անվտանգության կառավարման այս միջանկյալ հավաստագիրը վավեր է մինչեւ՝
.....

Համապատասխանության փաստաթուղթը/Համապատասխանության միջանկյալ փաստաթուղթը (14) ուժի մեջ է:

Տրամադրվել է՝

(Փաստաթղթվի տրամադրման վայրը)

Տրամադրման ամսաթիվը ...

(Համապատասխան լիազորություններով օժտված եւ հավաստագիրը տրամադրող պաշտոնյայի ստորագրությունը)

(Տրամադրող մարմնի դրոշմը կամ կնիքը՝ ըստ անհրաժեշտության)

Հավաստագիր թիվ

Անվտանգության կառավարման այս միջանկյալ հավաստագրի վավերականությունը
երկարաձգվում է մինչեւ՝

Երկարաձգման ամսաթիվը՝ ...

(Համապատասխան լիազորություններով օժտված եւ ժամկետը երկարաձգող պաշտոնյայի
ստորագրությունը)

(Տրամադրող մարմնի դրոշմը կամ կնիքը՝ ըստ անհրաժեշտության)

ՀԱՎԵԼ ՎԱԾ II

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌՆՁՈՒԹՅԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

- Մաս Ա Ընդհանուր դրույթներ
- Մաս Բ Հավաստագրումը եւ չափանիշները
2. Հավաստագրման գործընթացը
 3. Կառավարման չափանիշները
 4. Լիազորությունների մասով չափանիշները
 5. Համապատասխանության փաստաթղթի եւ անվտանգության կառավարման հավաստագրի ձեւը

ՄԱՍ Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Երբ իրականացվում են ստուգումներ եւ հաստատագրումներ, որոնք պահանջվում են ԱԿՄ կանոնագրքով այն նավերի դեպքում, որոնք սույն Կանոնակարգի գործողության շրջանակի մեջ են մտնում, անդամ պետությունները պետք է բավարարեն պահանջները եւ չափանիշները, որոնք սահմանված են սույն Բաժնի Բ մասով:

1.2. Բացի դրանից՝ անդամ պետությունները պետք է պատշաճորեն հաշվի առնեն վարչական մարմինների կողմից Անվտանգության կառավարման միջազգային (ԱԿՄ) կանոնագրքի իրականացման մասին 2001 թվականի նոյեմբերի 29-ի ԾՄԿ-ի կողմից Ա.913 (22) Բանաձեւի միջոցով ընդունված՝ Վերանայված ուղեցույցների դրույթները՝ այնքանով, որքանով դրանք ընդգրկված չեն սույն Բաժնի Բ մասում:

ՄԱՍ Բ. ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

2. Հավաստագրման գործընթացը

2.1. Ընկերությանը համապատասխանության փաստաթղթի տրամադրման համար եւ անվտանգության կառավարման հավաստագրի համար անհրաժեշտ հավաստագրման գործընթացն իրականացվում է՝ հաշվի առնելով ստորեւ ներկայացված դրույթները:

2.2. Հավաստագրման գործընթացը սովորաբար բաղկացած է հետեւյալ փուլերից՝

- 1) նախնական ստուգում,
- 2) տարեկան կամ միջանկյալ ստուգում,
- 3) գործողության ժամկետի երկարաձգման հաստատում եւ
- 4) լրացուցիչ ստուգում:

Այս ստուգումներն իրականացվում են վերահսկող մարմնին կամ այդ մարմնի անունից գործող հայտնի կազմակերպությանը ընկերության կողմից ներկայացված դիմումի հիման վրա:

2.3. Ստուգումների ժամանակ պետք է իրականացվի անվտանգության կառավարման աուդիտ:

2.4. Աուդիտն իրականացնելու համար նշանակվում է առաջատար աուդիտոր եւ, անհրաժեշտության դեպքում, աուդիտորներից կազմված թիմ:

2.5. Նշանակված առաջատար աուդիտորը կապվում է ընկերության հետ եւ կազմում է աուդիտի անցկացման պլան:

2.6. Աուդիտորական հաշվետվությունը կազմվում է առաջատար աուդիտորի ղեկավարությամբ, ով պատասխանատու է ճշգրտության եւ ամբողջականության համար:

2.7. Աուդիտորական հաշվետվության մեջ նշվում է աուդիտորական պլանը, աուդիտ իրականացնող թիմի անդամների անունները, ամսաթվերը եւ ընկերության անվանումը, անհամապատասխանությունների մասին տեղեկությունները եւ դիտողությունները, նախանշված նպատակների իրագործման առումով անվտանգության կառավարման համակարգի արդյունավետության մասին դիտարկումները:

3. Կառավարման չափանիշները

3.1 Աուդիտորները կամ աուդիտ իրականացնող թիմը, որը կառավարում է ԱԿՄ կանոնագրքի հետ համապատասխանության ստուգումը, իրավասու է ապահովելու՝

1. կանոնների եւ կանոնակարգերի հետ համապատասխանությունը՝ ներառյալ նավաստիների հաստատագրումը կազմակերպության կողմից շահագործվող յուրաքանչյուր տեսակի նավի համար,

2. հաստատումը, ստուգումը եւ հաստատագրման գործողությունները, որոնք համապատասխանում են ծովային հավաստագրերին,

3. տեխնիկական առաջարկը, որը պետք է հաշվի առնել՝ անվտանգության կառավարման համակարգի համաձայն, ինչպես պահանջվում է ԱԿՄ կանոնագրքով եւ

4. նավի շահագործումը գործնականում:

3.2. ԱԿՄ կանոնագրքի դրույթներին համապատասխանության ստուգումը իրականացնելիս պետք է ապահովել, որ անկախություն լինի խորհրդատվական ծառայություններ տրամադրող անձնակազմի եւ այն անձանց միջեւ, ովքեր իրականացնում են հաստատագրման ընթացակարգը:

4. Լիազորությունների վերաբերյալ չափանիշները

4.1. Ստուգում իրականացնելու հիմնական իրավասությունը,

4.1.1. Անձնակազմը, որը մասնակցում է ԱԿՄ կանոնագրքի պահանջներին համապատասխանության ստուգումը իրականացնելիս, պետք է բավարարի ստուգողների նվազագույն չափանիշները, ինչպես սահմանված է 95/21/ԵՀ հրահանգի VII հավելվածի 2-րդ բաժնով:

4.1.2. Նրանք ԱԿՄ կանոնագրքի պահանջներին համապատասխանության ստուգումն իրականացնելու համար համապատասխան իրավասություն եւ հմտություններ ունենալու համար պետք է անցած լինեն դասընթացներ, մասնավորապես, ներքոնշյալի առումով՝

ա) ԱԿՄ կանոնագրքի իմացությունը,

բ) պարտադիր կանոնները եւ կանոնակարգերը,

գ) տեխնիկական առաջարկը, որը պահանջվում է ԱԿՄ կանոնագրքի համաձայն, որը պետք է հաշվի առնեն կազմակերպությունները,

դ) ուսումնասիրման, հարցազրույցների, գնահատման եւ հաշվետվությունների գնահատման մեթոդը,

ե) անվտանգության կառավարման տեխնիկական կամ շահագործման առանձնահատկությունները,

զ) նավարկության եւ նավի վրա իրականացվող գործողությունների մասին հիմնարար գիտելիք եւ

է) առնվազն մեկ ծովին առնչվող կառավարման համակարգի աուդիտին մասնակցություն:

4.2. Նախնական ստուգման եւ գործողության ժամկետի երկարաձգման հաստատման իրավասություն.

4.2.1. Լիարժեք գնահատելու համար, թե արդյոք կազմակերպությունը կամ նավի յուրաքանչյուր տեսակ համապատասխանում է ԱԿՄ կանոնագրքին՝ բացի վերը նշված հիմնական իրավասությունից, անձնակազմը, որը պետք է իրականացնի նախնական ստուգումները կամ համապատասխանության փաստաթղթի եւ անվտանգության կառավարման հավաստագրի գործողության ժամկետի երկարաձգման հաստատումը, պետք է իրավասու լինի՝

ա) որոշելու, թե արդյոք անվտանգության կառավարման համակարգի տարրերը համապատասխանում են ԱԿՄ կանոնագրքին,

բ) որոշելու ընկերության կամ յուրաքանչյուր նավի ԱԿՀ-ի արդյունավետությունը՝ ապահովելու կանոնների եւ կանոնագրքերի հետ համապատասխանությունը, ինչպես ներկայացվել է պարտադիր եւ դասակարգման նպատակով իրականացվող ստուգումների արձանագրություններով,

գ) գնահատելու ԱԿՀ-ի արդյունավետությունը՝ այլ կանոնների եւ կանոնակարգերի հետ համապատասխանության ապահովման հարցում, որը չի իրականացվել օրենսդրական եւ դասակարգման ստուգումներով եւ ապահովելով այս կանոնների ու կանոնագրքերի հետ հավաստագրման համապատասխանությունը եւ

դ) գնահատելու, թե արդյոք ԾՄԿ, վարչական մարմինների, դասակարգող խմբերի եւ նավագնացության բնագավառի կազմակերպությունների կողմից առաջարկվող անվտանգ գործելակերպը հաշվի է առնվել:

4.2.2. Այս իրավասությունը կարող են ունենալ այն խմբերը, որոնք համատեղ ունեն պահանջվող ամբողջ իրավասությունը:

5. Համապատասխանության փաստաթղթի եւ անվտանգության կառավարման հավաստագրերի ձեւը

Երբ նավը շահագործվում է միայն անդամ պետությունում, անդամ պետությունները պետք է կամ օգտագործեն ԱԿՄ կանոնագրքին կից ձեւերը կամ համապատասխանության փաստաթուղթը, անվտանգության կառավարման հավաստագիրը, համապատասխանության միջանկյալ փաստաթուղթը եւ անվտանգության կառավարման միջանկյալ հավաստագիրը, որոնք մշակվել են ստորեւ նշված ձեւի համաձայն:

7(1) հոդվածից եւ, եթե կիրառելի է ,7(2) հոդվածից շեղման դեպքում տրամադրվող հավաստագիրը պետք է տարբերվի վերը նշված հավաստագրից եւ հստակորեն սահմանվի, որ շեղումը կատարվել է սույն Կանոնակարգի 7(1) եւ, եթե կիրառելի է, 7(2) հոդվածի համաձայն եւ պետք է ընդգրկի կիրառելի շահագործման սահմանափակումները:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

(Պաշտոնական կնիք) (Պետություն)

Հավաստագիր թիվ

Տրամադրվել է [«ԾՈՎՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1974 թվականի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ (փոփոխված) եւ] (15) Համայնքում ԱԿՄ կանոնագրքի կիրառման մասին թիվ 336/2006 կանոնակարգի (ԵՀ) դրույթների համաձայն

.....Կառավարության
վերահսկողության ներքո՝

(Պետության անվանումը)

կողմից՝

>(լիազորված անձի կամ կազմակերպության կողմից)

Ընկերության անվանումը եւ հասցեն՝

...

(տե՛ս, թիվ 336/2006 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածի Ա մասի 1.1.2. պարբերությունը)

ՍԱ ՀԱՎԱՍՏՈՒՄ է, որ Ընկերության անվտանգության կառավարման համակարգը ենթարկվել է աուդիտի, եւ որ այն համապատասխանում է «Նավերի անվտանգ շահագործման եւ աղտոտման կանխարգելման մասին» կառավարման միջազգային կանոնագրքի (ԱԿՄ կանոնագրքի) պահանջներին՝ ստորեւ ներկայացված նավերի տեսակների մասով (անհրաժեշտության դեպքում՝ ջնջել):

Ուղեւորատար նավ

Արագընթաց ուղեւորատար նավ

Արագընթաց բեռնատար նավ

Խոունաբեռն փոխադրումներ իրականացնող նավ

Նավթատար նավ

Քիմիական նյութեր փոխադրող նավ

Գազատար նավ

Շարժական ծովային հորատող սարք

Բեռնատար այլ նավ

‘ro-ro’ ուղեւորատար նավեր (‘ro-ro’ լաստանավերով) Համապատասխանության այս փաստաթուղթը վավեր է մինչեւ, ենթակա է պարբերական ստուգման

Ստուգման ավարտի ամսաթիվը, որի վրա հիմնվել է այս հավաստագիրը...

(օրը, ամիսը, տարին)

Տրամադրվել է՝

(Փաստաթղթվի տրամադրման վայրը)

Տրամադրման ամսաթիվը

...

(Համապատասխան լիազորություններով օժտված եւ փաստաթուղթը տրամադրող պաշտոնյայի ստորագրությունը)

(Տրամադրող մարմնի դրոշմը կամ կնիքը՝ ըստ անհրաժեշտության)

Հավաստագիր թիվ

ՏԱՐԵԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Սա հավաստում է, որ պարբերական ստուգումների ժամանակ [Կոնվենցիայի IX/6.1 կանոնակարգի եւ ԱԿՄ կանոնագրքի 13.4. պարբերության եւ] (16) թիվ 336/2006 կանոնակարգի (ԵՀ) 6-րդ հոդվածի համաձայն, համայնքում ԱԿՄ կանոնագրքի իրականացման վերաբերյալ անվտանգ կառավարման համակարգը համարվել է ԱԿՄ կանոնագրքի պահանջներին համապատասխանող:

ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՍՏՈՒԳՈՒՄ Ստորագրված է ...

(Իրավասու մարմնի ստորագրությունը)

Վայրը՝ ...

Ամսաթիվ ...

ՏԱՐԵԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՍՏՈՒԳՈՒՄ Ստորագրված է ...

(Իրավասու մարմնի ստորագրությունը)

Վայրը՝ ...

Ամսաթիվ՝ ...

ՏԱՐԵԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՍՏՈՒԳՈՒՄ Ստորագրված է ...

(Իրավասու մարմնի ստորագրությունը)

Վայրը՝ ...

Ամսաթիվ ...

ՏԱՐԵԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՍՏՈՒԳՈՒՄ Ստորագրված է ...

(Իրավասու մարմնի ստորագրությունը)

Վայրը՝ ...

Ամսաթիվ ...

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

(Պաշտոնական կնիք) (Պետություն)

Հավաստագիր թիվ

Տրամադրվել է [«ԾՈՎՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1974 թվականի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ (փոփոխված)] եւ (17) Համայնքում ԱԿՄ կանոնագրքի կիրառման մասին թիվ 336/2006 կանոնակարգի (ԵՀ) դրույթների համաձայն

.....Կառավարության

վերահսկողության ներքո՝

(պետության անունը)

կողմից՝

>(լիազորված անձի կամ կազմակերպության կողմից)

Նավի անվանումը՝ ...

Տարբերակող թիվ կամ տառեր՝ ...

Գրանցման նավահանգիստը՝ ...

Նավի տեսակը (18)՝ ...

Համախառը տոննաժը՝ ...

ԾՄԿ-ի թիվը՝ ...

Ընկերության անվանումը եւ հասցեն՝ ...

(տե՛ս թիվ 336/2006 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածի Ա մասի 1.1.2. պարբերությունը)

ՍԱ ՀԱՎԱՍՏՈՒՄ Է, որ նավի անվտանգության կառավարման համակարգը ենթարկվել է աուդիտի, եւ այն համապատասխանում է Նավերի անվտանգ շահագործման եւ աղտոտման կանխարգելման կառավարման միջազգային կանոնագրքի (ԱԿՄ կանոնագրքի)

պահանջներին՝ հիմնվելով այն փաստի վրա, որ ստուգվել է, որ Ընկերության Համապատասխանության փաստաթուղթը կարող է կիրառվել նաև այս տեսակի նկատմամբ:

Անվտանգության կառավարման հավաստագիրը վավեր է մինչև, ենթակա է պարբերական ստուգման եւ համապատասխանության փաստաթուղթը վավեր է մնում:

Ստուգման ավարտի ամսաթիվը, որի վրա հիմնվել է այս հավաստագիրը...

(օրը, ամիսը, տարին)

Տրամադրվել է՝

(Փաստաթղթի տրամադրման վայրը)

Տրամադրման ամսաթիվը

...

(Համապատասխան լիազորություններով օժտված եւ հավաստագիրը տրամադրող պաշտոնյայի ստորագրությունը)

(Տրամադրող մարմնի դրոշմը կամ կնիքը՝ ըստ անհրաժեշտության)

Հավաստագիր թիվ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՀԱՎԵԼՅԱԼ ՍՏՈՒԳՄԱՆ (ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՀԱՍՏԱՏՈՒՄ

ՍԱ ՀԱՎԱՍՏՈՒՄ է, որ պարբերական ստուգումների ժամանակ [Կոնվենցիայի IX/6.1 կանոնակարգի եւ ԱԿՄ կանոնագրի 13.8. պարբերության եւ](19) թիվ 336/2006 կանոնակարգի (ԵՀ) 6-րդ հոդվածի համաձայն, համայնքում ԱԿՄ կանոնագրի իրականացման վերաբերյալ, անվտանգ կառավարման համակարգը համարվել է, որ համապատասխանում է ԱԿՄ կանոնագրի պահանջներին:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՏՈՒԳՈՒՄ (պետք է ստորագրված է ...

իրականացվի հավաստագրի գործողության (Իրավասու մարմնի ստորագրությունը)
Ժամկետի ավարտման երկրորդ եւ երրորդ
ամսաթվերի միջեւ) Վայրը՝ ...

Ամսաթիվ ...

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍՏՈՒԳՈՒՄ

(20)

Ստորագրված է ...

(Իրավասու մարմնի ստորագրությունը)

Վայրը՝ ...

Ամսաթիվ ...

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍՏՈՒԳՈՒՄ

(21)

Ստորագրված է ...

(Իրավասու մարմնի ստորագրությունը)

Վայրը՝ ...

Ամսաթիվ ...

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍՏՈՒԳՈՒՄ

(22)

Ստորագրված է ...

(Իրավասու մարմնի ստորագրությունը)

Վայրը՝ ...

Ամսաթիվ ...

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

(Պաշտոնական կնիք) (Պետություն)

Հավաստագիր թիվ

Տրամադրվել է [«ԾՈՎՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1974 թվականի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ (փոփոխված) եւ] (23) Համայնքում ԱԿՄ կանոնագրքի կիրառման մասին թիվ 336/2006 (ԵՀ) կանոնակարգի դրույթների համաձայն

.....Կառավարության
վերահսկողության ներքո՝

(պետության անունը)

կողմից՝

>(լիազորված անձի կամ կազմակերպության կողմից)

Ընկերության անվանումը եւ հասցեն՝

...

(տե՛ս թիվ 336/2006 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածի Ա մասի 1.1.2. պարբերություն)

ՍԱ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է, ՈՐ ընկերության անվտանգության կառավարման համակարգը համարվել է, որ բավարարում է թիվ 336/2006 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածի Ա մասի 1.2.3 պարբերության նպատակները՝ ստորեւ նշված նավերի տեսակների համար (ջնջել անհրաժեշտության դեպքում).

Ուղեւորատար նավ

Արագընթաց ուղեւորատար նավ

Արագընթաց բեռնատար նավ

Խուռնաբեռն փոխադրումներ իրականացնող նավ

Նավթատար նավ

Քիմիական նյութեր փոխադրող նավ

Գազատար նավ

Շարժական ծովային հորատող սարք

Այլ բեռնատար նավ

‘*ro-ro*’ ուղեւորատար նավեր (‘*ro-ro*’ լաստանավերով)

Սույն Համապատասխանության փաստաթուղթը վավեր է մինչեւ՝

.....

Տրամադրվել է՝ ...

(Փաստաթղթի տրամադրման վայրը)

Տրամադրման ամսաթիվը ...

(Համապատասխան լիազորություններով օժտված եւ փաստաթուղթը տրամադրող պաշտոնյայի ստորագրությունը)

(Տրամադրող մարմնի դրոշմը կամ կնիքը՝ ըստ անհրաժեշտության)

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

(Պաշտոնական կնիք) (Պետություն)

Հավաստագիր թիվ

Տրամադրվել է [«ԾՈՎՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1974 թվականի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ (փոփոխված) եւ] (24) Համայնքում ԱԿՄ կանոնագրքի կիրառման մասին թիվ 336/2006 կանոնակարգի (ԵՀ) դրույթների համաձայն

.....Կառավարության
վերահսկողության ներքո՝

(պետության անունը)

կողմից՝

>(լիազորված անձի կամ կազմակերպության կողմից)

Նավի անվանումը՝ ...

Տարբերակող թիվ կամ տառեր՝ ...

Գրանցման նավահանգիստը՝ ...

Նավի տեսակը (25)՝ ...

Համախառն տոննաժը՝ ...

ԾՄԿ-ի թիվը՝ ...

Ընկերության անվանումը եւ հասցեն՝ ...

(տե՛ս թիվ 336/2006 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածի Ա մասի 1.1.2. պարբերություն)

ՍԱ ՀԱՎԱՍՏՈՒՄ Է, որ թիվ 336/2006 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածի Ա մասի 14.4 պարբերության պահանջները կատարվել են, եւ որ Համապատասխանության փաստաթուղթը/ընկերության Համապատասխանության միջանկյալ փաստաթուղթը (**) համապատասխանում է նավի այս տեսակին:

Անվտանգության կառավարման միջանկյալ հավաստագիրը վավեր է մինչեւ ...
համապատասխանության փաստաթղթին/համապատասխանության միջանկյալ
փաստաթուղթը (27) վավեր է:

Տրամադրվել է՝ ...

(Փաստաթղթի տրամադրման վայրը)

Տրամադրման ամսաթիվը ...

(Համապատասխան լիազորություններով օժտված եւ հավաստագիրը տրամադրող
պաշտոնյայի ստորագրությունը)

(Տրամադրող մարմնի դրոշմը կամ կնիքը՝ ըստ անհրաժեշտության)

Հավաստագիր թիվ

Անվտանգության կառավարման այս միջանկյալ հավաստագրի վավերականությունը
երկարաձգվում է մինչեւ՝

Երկարաձգման ամսաթիվը՝ ...

(Համապատասխան լիազորություններով օժտված եւ ժամկետը երկարաձգող պաշտոնյայի
ստորագրությունը)

(Տրամադրող մարմնի դրոշմը կամ կնիքը՝ ըստ անհրաժեշտության)

1) ՊՏ C 302, 7.12.2004թ., էջ 20:

2) Եվրոպական պառլամենտի 2004 թվականի մարտի 10-ի եզրակացություն (ՊՏ C 102 E,
28.04.2004թ., էջ 565), Խորհրդի 2005 թվականի հուլիսի 18-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ
C 264 E, 25.10.2005թ., էջ 28) եւ Եվրոպական պառլամենտի 2008 թվականի դեկտեմբերի
13-ի դիրքորոշում (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում):

3) ՊՏ L 320, 30.12.1995թ., էջ 14: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի
թիվ 2099/2002 (ԵՀ) հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 324, 29.11.2002թ., էջ 1):

4) ՊՏ L 157, 07.07.1995թ., էջ 1 Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2002/84/ԵՀ
հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 324, 29.11.2002թ., էջ 53):

5) ՊՏ L 319, 12.12.1994թ., էջ 20: Վերջին անգամ թիվ 2002/84/ԵՀ հրահանգով փոփոխված
հրահանգ:

6) ՊՏ L 144, 15.05.1998թ., էջ 1: Վերջին անգամ Հանձնաժողովի 2003/75/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 190, 30.07.2003թ., էջ 6):

7) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

8) ՊՏ L 324, 29.11.2002թ., էջ 1: Հանձնաժողովի թիվ 415/2004 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 68, 6.03.2004թ., էջ 10):

9) ՊՏ L 324, 29.11.2002թ., էջ 1:

10) Տե՛ս վերահսկող մարմնի կողմից Անվտանգության կառավարման միջազգային կանոնագրքի իրականացման ուղեցույցները, որոնք ընդունվել են Կազմակերպության կողմից A. 913(22) բանաձեռով:

11) Նշել նավի հետեւյալ տեսակներից որեւէ մեկը՝ ուղետրատար նավ, արագընթաց ուղետրատար նավ, արագընթաց բեռնատար նավ, չոր, խուռնաբեռն փոխադրումներ իրականացնող նավ, նավթատար նավ, քիմիական նյութեր փոխադրող նավ, գազատար նավ, շարժական ծովային հորատող սարք, այլ բեռնատար նավ:

12) Նշել նավի հետեւյալ տեսակներից մեկը՝ ուղետրատար նավ, արագընթաց ուղետրատար նավ, արագընթաց բեռնատար նավ, չոր, խուռնաբեռն փոխադրումներ իրականացնող նավ, նավթատար նավ, քիմիական նյութեր փոխադրող նավ, գազատար նավ, շարժական ծովային հորատող սարք, այլ բեռնատար նավ:

13) Հարկ եղած դեպքում ջնջել:

14) Հարկ եղած դեպքում ջնջել:

15) Կարող է ջնջվել այն նավերի դեպքում, որոնք զբաղվում են միայն մեկ անդամ պետությունում նավարկություններով:

16) Կարող է ջնջվել այն նավերի դեպքում, որոնք զբաղվում են միայն մեկ անդամ պետությունում նավարկություններով:

17) Կարող է ջնջվել այն նավերի դեպքում, որոնք զբաղվում են միայն մեկ անդամ պետությունում նավարկություններով:

18) Նշել նավի հետեւյալ տեսակներից մեկը՝ ուղետրատար նավ, արագընթաց ուղետրատար նավ, արագընթաց բեռնատար նավ, խուռնաբեռն փոխադրումներ իրականացնող նավ,

նավթատար նավ, քիմիական նյութեր փոխադրող նավ, գազատար նավ, շարժական ծովային հորատող սարք, այլ բեռնատար նավ, ‘ro-ro’ ուղեւորատար լաստանավ:

19) Կարող է ջնջվել այն նավերի դեպքում, որոնք նավարկություններ են իրականացնում միայն մեկ անդամ պետությունում:

20) Եթե կիրառելի է Հղում է արվում վարչական մարմինների կողմից Անվտանգության կառավարման միջազգային (ԱԿՄ) կանոնագրքի իրականացման ուղեցույցների (Բանաձեւ Ա.913 (22)) 3.4.1 պարբերությանը եւ ԱԿՄ կանոնագրքի 13.8 պարբերությանը:

21) Եթե կիրառելի է Հղում է արվում վարչական մարմինների կողմից Անվտանգության կառավարման միջազգային (ԱԿՄ) կանոնագրքի իրականացման ուղեցույցների (Բանաձեւ Ա.913 (22)) 3.4.1 պարբերությանը եւ ԱԿՄ կանոնագրքի 13.8 պարբերությանը:

22) Եթե կիրառելի է Հղում է արվում վարչական մարմինների կողմից Անվտանգության կառավարման միջազգային (ԱԿՄ) կանոնագրքի իրականացման ուղեցույցների (Բանաձեւ Ա.913 (22)) 3.4.1 պարբերությանը եւ ԱԿՄ կանոնագրքի 13.8 պարբերությանը:

23) Կարող է ջնջվել այն նավերի դեպքում, որոնք նավարկություններ են իրականացնում միայն մեկ անդամ պետությունում:

24) Կարող է ջնջվել այն նավերի դեպքում, որոնք նավարկություններ են իրականացնում միայն մեկ անդամ պետությունում:

25) Նշել նավի հետեւյալ տեսակներից մեկը՝ ուղեւորատար նավ, արագընթաց ուղեւորատար նավ, արագընթաց բեռնատար նավ, խուռնաբեռն փոխադրումներ իրականացնող նավ, նավթատար նավ, քիմիական նյութեր փոխադրող նավ, գազատար նավ, շարժական ծովային հորատող սարք, այլ բեռնատար նավ, ‘ro-ro’ ուղեւորատար լաստանավ:

26) Հարկ եղած դեպքում ջնջել:

27) Հարկ եղած դեպքում ջնջել: